ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 1

2022թ. սեպտեմբերի 8-ին տեղի ունեցավ ՀՀ Կոտայքի մարզի Գեղաշենի Ռազմիկ Ստեփանյանի անվան միջնակարգ դպրոցի Iա դասարանի ծնողական ժողովը: Ժողովին ներկա էին բոլոր ծնողները, դասղեկ Թերեզա Սամսոնյանը:

ՕՐԱԿԱՐԳՈՒՄ՝

1. Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրություն:
2. 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցի քննարկում:

1.Լսեցին.- Դասարանի ծնողական խորհրդի և խորհրդի նախագահի ընտրության հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Թերեզա Սամսոնյանը՝ ներկայացնելով ծնողական խորհրդի ընտրության կարգը: Առաջարկվեց 2022-2023 ուսումնական տարվա համար ձևավորել Iա դասարանի ծնողական խորհուրդ՝ նախագահ և չորս անդամ կազմով: Առաջարկվեց նախագահի թեկնածու, նշել մնացած չորս անդամների թեկնածուներին ևս:Առաջարկվեց հինգ անդամների թեկնածություն:Նախագահի թեկնածու առաջադրվեց Նարինե Մելքոնյանը, որից հետո կատարվեց քվեարկություն: Միաձայն ընտրվեց նախագահ:

Որոշեցին.-Iա դասարանում ձևավորել ծնողական խորհուրդ հետևյալ կազմով.

1. Նարինե Մելքոնյան /նախագահ/
2. Անահիտ Հակոբյան /անդամ/
3. Մարիամ Պողոսյան /անդամ/
4. Մարգարիտ Գրեյան /անդամ/
5. Վեհանուշ Անտոնյան /անդամ/

2.Լսեցին.- 2022-2023 ուստարում ուսումնական գործընթացը կազմակերպելու հարցը:

Ելույթ ունեցավ դասղեկ Թերեզա Սամսոնյանը՝ նշելով, որ այս տարի նոր ուսումնական տարում սահմանվում է հնգօրյա աշխատանքային ռեժիմ, 1-ին կիսամյակը բաղկացած է 14 շաբաթից: Տեղեկացրեց, որ սովորողները դպրոց են հաճախելու դպրոցական համազգեստով: Նա հրահանգեց, որպեսզի ծնողներն ուշադիր լինեն երեխաների գրենական պիտույքների, համազգեստների և հաճախումների նկատմամբ: Դասղեկը հորդորեց, որ ծնողներն ավելի ուշադիր լինեն իրենց երեխաների ուսման հարցում: Պահեն ծնող- դասղեկ-

աշակերտ կապը և անհրաժեշտության դեպքում այցելեն դպրոց իրենց երեխաների վրա վերահսկողությունը մեծացնելու նպատակով: Անդրադարձավ նաև աշխատանքային տետրերին՝ նշելով, որ ուսումնական գործընթացն ավելի արդյունավետ կազմակերպելու համար անհրաժեշտ է ձեռք բերել աշխատանքային տետրեր:

Որոշեցին.- Առավել ուշադիր և հետևողական լինել երեխաների ուսման հարցում: Ձեռք բերել մայրենիի, մաթեմատիկայի և երաժշտության աշխատանքային տետրեր: Պահել ուսուցիչ-աշակերտ-ծնող կապը, անհրաժեշտության դեպքում մեծացնել երեխաների վերահսկողությունը, որպեսզի կարողանան առավել արդյունավետ կազմակերպել ուսումնական գործընթացը::

Ծնողական խորհրդի նախագահ՝ Նարինե Մելքոնյան

Քարտուղար՝ Անահիտ Հակոբյան